«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-053-28.09.2021-ԱՌՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունումը և դրա արդյունքում Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ենթակայությամբ գործող կազմակերպությանը բացառությունների շարքում ներառելը նպատակահարմար չի համարում՝ հաշվի առնելով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննություններն առանց համապատասխան լիցենզիայի իրականացնելու ռիսկերը և լիցենզավորման ընթացակարգին խիստ հետևելու կարևորությունը:

Հաշվի առնել, որ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի հետ իրականացվող գործունեության հանրային վտանգավորության աստիճանը, դրանց հետ կապված գործունեությունը մշտապես գտնվում է համապատասխան մարմինների վերահսկողության ներքո: Լիցենզավորումը հանդիսանում է գործունեության իրականացման համար անհրաժեշտ պահանջների և պայմանների ուսումնասիրության և վերահսկողական գործունեություն իրականացնելու կարևոր մեխանիզմ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում թվարկված մարմիններից միայն Ոստիկանության կազմակերպաիրավական ձևը չի համապատասխանում «Լիցենզավորման մասին» օրենքի պահանջներին (թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննությունն իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանման միջոցով), մյուս մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպություններն արդեն իսկ ունեն համապատասխան լիցենզիաներ և նրանց համար տվյալ տեսակով լիցենզավորվելը որևէ հակասություն չի առաջացնում օրենսդրության պահանջների հետ՝ նպատակահարմար է նաև վերջիններիս լիցենզավորումը՝ ելնելով վերոնշյալ նպատակներից:

Ըստ այդմ, առաջարկում ենք՝

1. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 31.2-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «Հայաստանի Հանրապետության արդարադատության, առողջապահության բնագավառների պետական կառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների,» բառերը՝ հաշվի առնելով, որ վերջիններս իրենց կազմակերպաիրավական ձևով համապատասխանում են «Լիցենզավորման մասին» օրենքի պահանջներին և «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 31.2-րդ հոդվածով նախատեսված գործունեությամբ զբաղվելու համար պետք է լիցենզավորվեն:

2. Օրենքի Նախագծում սահմանել, որ օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո՝ հաշվի առնելով, որ առանց համապատասխան լիցենզիայի գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար անհրաժեշտ է ժամանակ՝ համապատասխան լիցենզիա ստանալու համար: